
**ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻՆ**

ԱՅՎԱԶՅԱՆ Ս. Ռ.

Ցուցական դերանունները ուրարտերենում: Մասնագիտական գրականությունում ուրարտերենի ցուցական դերանունների համար ներկայացվում է հետևյալ պատկերը¹: Առավել հաճախ հանդիպում է *ini* դերանունը, որը ցույց է տալիս մերձավոր առարկաներ՝ «սա, այս, դա» նշանակությամբ: Բացի վերոհիշյալ հիմնական ձևից, սույն դերանունը վկայված է նաև՝ *ine-li* «սրանք» (բացարձակ հոլով, հոգնակի թիվ), *ina-ni* «սրանցից» (բացառական հոլով, հոգնակի թիվ), *ini-ni* (ուղղական հոլով, եզակի թիվ (°)) ձևերով: Մեկիքիշվիին հնարավոր է համարում, որ վերջինիս ներգոյական հոլովն է ներկայացնում *ina* բառը՝ «այստեղ, սրանցում, սրանում» նշանակությամբ, որից կառուցված են հետևյալ դերանունները.

1) *ina-ni* «այս կողմից»՝ *-ni* մասնիկի հավելումով (բացառական հոլովի վերջավորություն), օրինակ՝ *inani aptin šuiniani* «ծովի այս կողմից»².

2) պատկանելության *-ini/-hini* ածանցի հավելումով՝ *ina-ni* < **ina-ini, ina-hini* «այսպիսի», «այս», օրինակ՝ *inani burganani* «այս ամրոցը (°)» (եզակի թիվ), *inane-li arnušine-li/baušine-li* «այս արարքները / իրերը» (հոգնակի թիվ), *inahinaue URU^{MEŠ} ini PAŠ hurišhi manini* «այս քաղաքներին՝ այս ջրանցքը ռոռգիչ թող լինի» (հոգնակի թիվ, տրական հոլով):

Ini ցուցական դերանվանը *-uki* (առաջին դեմքի ստացական դերանուն) մասնիկի հավելումով ստացվում է *inuki* < **ini-uki* դերանունը, որը, սակայն, ունի հաստատող, նույնություն ցույց տվող իմաստ՝ «այդ նույն», «նույն ինքն» և այլն: Ինչպես *ini*-ի, այնպես էլ *inuki*-ի ներգոյական հոլովներից կազմվում են մի շարք նոր դերանուններ.

1) *inuka-ni* «այս նույն տեղից, այստեղից»՝ *-ni* մասնիկի հավելումով (բացառական հոլովի վերջավորություն): Օրինակ, *inukani esinini* «այս տեղից».

¹ Ուրարտերենի ցուցական դերանունների մեկնաբանման արդի վիճակը առավել հանգամանալի ներկայացնում է Գ. Մեկիքիշվիին՝ *Урартские клинообразные над* (այսուհետև՝ *УКН*), *М.*, 1960, *с. 62-63* և *Урартский язык* (այսուհետև՝ *УЯ*), *М.*, 1964, *с. 40-44* աշխատություններում: Մեր շարադրանքը առավելապես հիմնված է այս աղբյուրների վրա:

² Պետք է շփոթել *ini* հիմքից կազմված հոգնակի բացառականի հետ, որը նույնպես գրվում է *inani*:

2) պատկանելության *-ini/-hini* ածանցի հավելումով՝ *inuka-ni* < **inuka-ini*, *inuka-hini* «այս նույն, այս», «այսպիսի»: Առաջինից կազմվում է *inukani edini* դարձվածը՝ «դրանից հետո» մոտավոր իմաստով, իսկ երկրորդը վկայված է հետևյալ դրվագում՝ *inuka-hine^m Rusaine hubi* «Ռուսաի այսպիսի հովտին»:

Զուգահեռաբար կան *ikukani* < **ikuka-ini*, *ikuka-hini* «նույն», «այդ նույն» դերանունները, որոնք ենթադրաբար առաջացել են **ikuka* (ներգոյական հոլով՝ **ikuki*-ից) չվկայված դերանունից: Վերջինս իր հերթին առաջացել է (այդպես է ենթադրվում) նույնպես չվկայված **iki* դերանունից՝ *-uki* մասնիկի հավելումով: Այսպիսով, *ini*-ի հետ զուգահեռ ենթադրվում է մեկ այլ՝ **iki* դերանվան գոյությունը, որը պետք է ցույց տար հեռավոր առարկաներ: **iki*-ի կողքին ենթադրվում է նաև **aki*-ն, որից կազմվում է *akuki* ձևը (վկայված է մեկ անգամ): Մեկ այլ՝ **iši* դերանվան գոյությունն է ենթադրվում *išani* < *iša+ ini* «այդ կողմից» դերանվանական ձևում, որը կազմված է *iša* (ներգոյական հոլով) հիմքի վրա *-ini* (բացառական հոլովի ցուցիչ) մասնիկի հավելումով, նման *inani*-ին (*inani* < *ina+ ini*): Նույն *ini* դերանունից, ածական անունների *-usi* ածանցի հավելումով, կազմվում է *inusi(ni)* < *ini-usi(ni)* «այսպիսի (°)» ձևը:

Եթե ամփոփենք վերոհիշյալ շարադրանքը, ապա ստացվում է, որ ուրարտերենում առկա են՝ *ini*, **iši*, **iki* ցուցական դերանունները (վկայված է միայն *ini*-ն), որոնց վրա *-uki* և *-usi* մասնիկի հավելումով կազմվում են՝ *inuki*, *išuki*, *ikuki* և *inusi* ձևերը (վկայված են միայն *inuki*-ն և *inusi*-ն): Այս երկու խմբերը ներկայացնող դերանունների ներգոյական հոլովներից համապատասխանաբար կազմվում են՝ *ina/iša/*ika-* և *inuka/*išuka/ikuka-* հիմքերը: Դրանցից բացառական հոլովի *-ni* ցուցիչի և պատկանելություն ցույց տվող *-ini/hini* ածանցների միջոցով կազմվում են ուրարտերենի ցուցական դերանունները.

Հիմք		Դերանուն		
<i>ina-</i> , <i>inuka-</i>	<i>ina-ni</i>	<i>ina-hini</i>	<i>inuka-ni</i>	<i>inuka-hini</i>
<i>iša-</i> , <i>*išuka-</i>	<i>iša-ni</i>	<i>iša-hini</i>	-	-
<i>*ika-</i> , <i>ikuka-</i>	-	-	<i>ikuka-ni</i>	<i>ikuka-hini</i>

Աղյուսակից պարզորոշ երևում է, որ արձանագրություններում պակասում են *išu-ka-* և *ika-* հիմքերով դերանունները: Նման բաշխումը հազիվ թե պատահական լինի, և, իսկապես, *iku-* (վանկագիր՝ *i-ku-*) հիմքը, որից կազմվում են *ikukani*, *ikuka-hini* դերանունները, նույն հաջողությամբ կարելի է կարդալ *išu-* (վանկագիր՝ *i-šp-*)³:

³ Sté u Липин Л., Аккадский язык (այսուհետև՝ АЯ), М., 1964, с. 137-148, знак N 282.

Այսպիսի ընթերցման դեպքում այլևս կարիք չի լինի արհեստականորեն ներմուծել ոչ մի տեղ չվկայված **iki-* ենթադրյալ դերանունը: Իսկ՝ *išukani*, *išukaḥini*, ընթերցմամբ՝ *ikukani*, *ikukaḥini* դերանունները կապվում են արդեն հիշատակված *iša-* դերանվանական հիմքին՝ լրացնելով պակասող շարքը (տե՛ս աղյուսակը): Այսպիսով, ցուցական դերանունների համար ստանում ենք հետևյալ համադիր պատկերը.

Հիմք			Դերանուն		
<i>ina-</i> ,	<i>inuka-</i>	<i>ina-ni</i>	<i>ina-ḥini</i>	<i>inuka-ni</i>	<i>inuka-ḥini</i>
<i>iša-</i> ,	<i>išuka-</i>	<i>iša-ni</i>	<i>iša-ḥini</i>	<i>išuka-ni</i>	<i>išuka-ḥini</i>

Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք եզրակացնել, որ ուրարտերենում բացակայում է **iki* ենթադրյալ դերանունը, և ցուցական դերանունների համար առկա են հետևյալ հիմքերը.

1. *iša-*, *ina-*: Սրանցից համապատասխանաբար կազմված են՝ *iša-ni*, *ina-ni* և *iša-ḥini*, *ina-ḥini* դերանունները⁴:

2. *išu-*, *inu-*: Սրանցից ունենք՝ *išu-ka-ni*, *inu-ka-ni* և *išu-ka-ḥini*, *inu-ka-ḥini* դերանունները: *Inu-* հիմքից ունենք նաև *inu-ki* և *inu-si(ni)* դերանունները:

Եթե, ի դեմս մեկ անգամ վկայված *akuki* (*ašuki*) բառի, իրապես գործ ունենք ինչ-որ դերանվան հետ, ապա վերոհիշյալ հիմքերին պետք է հավելել նաև *ašu-* հիմքը (հմմտ. *a(i)šei*, *a(i)nei* բառերը. վերջիններիս մասին տե՛ս առանձին):

Ցուցական դերանունները հայերենում: Հայերենում գործում է չորս (ներառյալ՝ ցուցական հոդերը) շարքից բաղկացած ցուցական դերանունների համադիր եռադեմ համակարգ: Դրանք ներկայացնում են հետևյալ պատկերը.

Դեմք		Դերանուն		Հոդ
I	սո-յն	սա	այս	ս
II	դո-յն	դա	այդ	դ
III	նո-յն	նա	այն	ն

Համեմատելով այն ուրարտական ցուցական դերանունների հետ՝ միաբաժնորեն կարելի է պնդել, որ Վանի արձանագրություններում՝ ի դեմս *iša-*, *ina-*, *išu*, *inu-* դերանվանական հիմքերի, վկայված են հայերենի՝ *սա*, *նա* և *սո-*, *նո-* ցուցական դերանվանական հիմքերը: Ընդ որում, ո-ով տարբերակները հայերենում ունեն նույն իմաստային նրբերանգները (հաստատող, նույնություն ցույց տվող), ինչ ուրարտերենում: Հմմտ. օրինակ՝ *inu-ka-ni*, *inu-ka-ḥini* «այս

⁴ Այս հիմքով ունենք նաև *i-ša-na* և *ša-na* ձևերը:

նույն, նույն ինքն, նույն» - հայ. նոյն «նույն, միևնույն, ինքն», «նույն այն, նույն այս», *išuka-ni, išuka-ĥini* (նախկին ընթերցմամբ՝ *ikuka-ni, ikuka-ĥini*. այսուհետև կներկայացնենք առաջարկվող ընթերցմամբ) «այն նույն, նույն ինքն» - հայ. սոյն «նույն այս, էլի այս»: Ինչպես ուրարտերենում, այնպես էլ հայերենում սույն դերանուններից կազմվում են համանման դարձվածներ: Օրինակ, արձանագրություններում առավել հաճախ հանդիպող *išukani MU / šalie / UD^{ME}* «այդ/այս նույն տարի/օրը /ժամանակ» և գրաբարյան *(h) սոյն/նոյն օրին/ժամայն* դարձվածը «այսօր իսկ, այսօր, իսկույն» և այլն:

Սույն դերանունների սկզբնական *i-* հնչյունի մեջ, ամենայն հավանականությամբ, պետք է տեսնել հայերենի ի/յ նախդիրը: Մրա օգտին է խոսում համանման համատեքստում՝ *šana, dani* տարբերակների առկայությունը՝ *išani/a, inani* բառերի կողքին (օրինակները տե՛ս ստորև՝ «*ղա*» դերանվանը վերաբերող կետում):

Ինչ վերաբերում է *-ki/a* ածանցին, ապա առայժմ դժվար է որևիցե ստույգ բան ասել այդ մասին: Ենթադրվող կապը ուրարտ. *-uki* «իմ» դերանվանական վերջնամասնիկի հետ քիչ հավանական է իմաստային առումով⁵:

Հետաքրքիր է, որ Վանի արձանագրություններում բացակայում են **iduki, *iduka-ni/ĥini* դերանունները, որոնք պետք է համապատասխանեին հայերենի երկրորդ դեմքի դոյն դերանվանը: Այս փաստը թերևս խոսում է այն մասին, որ Վանի թագավորության շրջանում հայերենում դեռևս չէր ձևավորվել ցուցական դերանունների եռադեմ համակարգը, և գործում էր հնդեվրոպական նախալեզվի առարկաները ըստ դիրքի՝ մոտ կամ հեռու, նախապես հիշված (հայտնի, ծանոթ) կամ չհիշված տարբերակելու համակարգը: Բայց բացառված չէ, որ առայժմ չթարգմանվող *dani, idani* բառերի մեջ պետք է տեսնել հայերենի երկրորդ դեմքի «ղա» ցուցական դերանունը (այս մասին տե՛ս ստորև): Համենայն դեպս, ակնհայտորեն հայերենի երկրորդ դեմքի *դ* ցուցական հոդն է արտացոլված ուրարտերենի ուղևորական հոլովի *-di* ցուցիչի մեջ: Դա հատկապես ցայտուն երևում է ուղևորական հոլովի և *edi-a/ni* «այդտեղ» տեղի մակբայի հերթագայության մեջ. օրինակ՝ *išukani MU ušta-di^{KUR} Uburda-ue edia* «այդ նույն տարի արշավեցի դեպի Ուբուրդա» և *išukani MU ušta-di^{KUR} Manai-di*

⁵ Գ.Ղափանցյանը այս մասնիկը համարելով դերանվանական ածանց՝ անորոշ առումով, համեմատում է հնդեվրոպական որոշ լեզուների համանման մասնիկների հետ՝ խեթ. *-ki*, լատին. *-que*, արիական *-ča*, հայ. *-ք* (ի-ք, ո-ք) [Գ.Ղափանցյան, Ուրարտուի պատմություն (այսուհետև՝ ՈւՊ), Ե., 1940, էջ 29]: Այն նմանություն ունի հայ. *-իկ* ածանցի հետ, որը, ի թիվս այլ կիրառությունների, կազմում է նաև ցուցական դերանուններ. օրինակ՝ աւաղիկ, ավասիկ, ավանիկ: Համեմատեք նաև *այս, այդ, այն* ցուցական դերանունների երկար հոլովները, ինչպես նաև այլակ, այլալակ դերանունները:

«այդ նույն տարի արշավեցի դեպի Մանա» և այլն⁶: Հմմտ. գրաբարյան դերանվանական մակբայները, որոնք գոյականի հետ գործածվելիս նշանակությամբ փոխարինում են *u*, *η*, *ն* ցուցական հոդերին. օրինակ՝ է՛ջ դու վաղվադակի ի ձիոյ այտի, փիւ. է՛ջ դու վաղվադակի ի ձիոյ-դ յայդմանէ «ցած իջիր իսկույն այդ ձիուց (կամ, ձիուցդ)» և այլն⁷:

Հայերենի ցուցական հոդերի արտացոլումը Վանի արձանագրություններում: Հայերենի հոդերը՝ *u*, *η* և *ն* (համապատասխանաբար՝ առաջին երկրորդ և երրորդ դեմքի համար), գործածվում են ցուցական, դիմորոշ, ստացական և որոշիչ իմաստներով (որոշիչ առումով գործածվում է միայն *ն* հոդը): Ինչպես արդեն նշեցինք, հայերենի երկրորդ դեմքի դ հոդը ուրարտերենում հանդես է գալիս ուղևորական հոլովի ցուցչի դերում: Ընդ որում, ինչպես և հայերենում այն կարող է փոխարինվել համապատասխան դերանվանական մակբայով (օրինակները տե՛ս վերևում): Հայերենի երրորդ դեմքի ն հոդը ուրարտերենում արտացոլված է համանման *-ni* մասնիկի տեսքով: Այն ունի հետևյալ կիրառությունները:

1) Հավելվում է անվան մաքուր հիմքի վրա՝ կազմելով ուրարտերենի ուղևորական հոլովը (արտահայտում է որոշիչ իմաստ): Օրինակ՝ *iesē URULuhīuni-ni hāubi* «ես Լուիսիունի-ն գրավեցի»: *DHaldi-ni uluštabi* «Խալդի-ն առաջնորդեց», *uštali URUMeštaedi mIšpuuini-ni mdSardurehe mMinua-ni mIšpuuinehe* «արշավեցին դեպի Մեստա՝ Իշպուինի-ն Սարդուրի-ի, Մինուա-ն Իշպուինի-ի»:

2) *Ini* (< *i-ni*) տեսքով հանդես է գալիս որպես մերձավոր առարկաների ցուցական դերանուն (նույնպես արտահայտում է որոշիչ իմաստ): Օրինակ՝ *mIšpuuiniše mdSardurehineše ini l-e zaduni* «Իշպուինը Սարդուրի-ի՝ այս տունը կառուցեց», *mIšpuuiniše mdSardurehineše l-ini* (ետադաս)⁸ *šidištuni, mMinuaše ineli tar(a)maneli tešiuni* «Մինուան այս թառմաները *tešiuni* (բայ)»:

⁶ Այս մասին տե՛ս, օրինակ՝ **Арутюнян Н.**, *Корпус урартских клинообразных надписей* (այսուհետև՝ *КУКН*), *Е.*, 2001, с. 442.

⁷ Այս մասին տե՛ս Ավետիսյան Հ., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1986, էջ 140:

⁸ Ն. Հարությունյանը այս *Ē-ini*-ի տակ հասկանում է *susi-ini*՝ կապ չտեսնելով այս *i-ni*-ի և *ini* դերանվան միջև (*КУКН*, *над.* 19, *прим.* 5): Եթե նույնիսկ այդպես է, ապա այս երկու տիպի արտահայտությունների համեմատությունը (*ini susi(e) šidištuni* և *susi-ni šidištuni*), որտեղ գոյականը կամ օժտվում է *ini* դերանունով, կամ դրվում ուղղական հոլովով, ակնհայտորեն վկայում է *ini* դերանվան և ուղղական հոլովի *-ni* կազմիչի կապի մասին: Այս երկու ձևերի հնարավոր կապի մասին տե՛ս նաև (*УЯ*, с. 31, *прим.* 55). Գրաբարում այս *ini*-ն պահպանվել է միայն հետադաս կիրառությամբ՝ հոդի տեսքով: Այն, ինչպես և ուրարտերենում, կարող է դրվել ինչպես գոյականի, այնպես էլ բայի վրա: Բայց եթե ուրարտերենում *-ni*-ի հավելումը բային համատարած է, ապա հայերենում (գրաբարում) *ն* հոդի հավելումը բային մասնակի բնույթ է կրում: Օրինակ. որ սիրեն զքեզ (= նա, որ սիրում է քեզ) (**Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ. էջ 12), որ

3) Հավելվում է երրորդ դեմքի անցողական բայերի վերջում՝ որպես ուղիղ խնդրի (օբյեկտի) երրորդ դեմքի եզակի թվի ցուցիչ (այն, նա): Օրինակ՝ *teru-mi* ^d*Haldei patari tini* «դրեց Խալդի-ի քաղաք-ամրոց անունը (նրա)»:

Փաստորեն, այն նախադասության մեջ ազատորեն կարող է հավելվել ինչպես բային և խնդրին (օբյեկտին), այնպես էլ ենթակային (սուբյեկտին)⁹: Այս առումով շատ նման է մեկ այլ՝ *-me* «ինձ» մասնիկին (տե՛ս ՄԲ, Ը. 40): Բայց ի տարբերություն *-me*-ի, որը դերանունների հետ գործածվելիս վերջնամասնիկի ձևով հավելվում է վերջիններիս, *-ni*-ն կարող է հանդես գալ նաև ինքնուրույն՝ որպես անկախ դերանուն՝ *ini* ձևով:

Հայերենի առաջին դեմքի *u* հոդը ուրարտերենում չի վկայված: Փոխարենը լայնորեն օգտագործվում են հնդեվրոպական ծագում ունեցող *-me* «ինձ» և *-uki* «իմ» վերջնամասնիկները *[-uki*-ն ուրարտերենին է անցել հավանաբար խեթերենի միջնորդությամբ (ՈւՊ, էջ 29, 30)], որոնք արտահայտում են ստացական դերանունների իմաստ¹⁰:

Հայերենի՝ այս, այն ցուցական դերանունների հնարավոր առկայությունը Վանի արձանագրություններում: Ամենայն հավանականությամբ, ցուցական դերանունների հետ պետք է կապել Վանի արձանագրություններում վկայված *a(i)še(i)* «երբևիցե», *a(i)ne(i)* «ինչ-որ մեկը, որևիցե մեկը» բառերը. հմմտ հայ. *այս, այն* ցուցական դերանունները: Մասնագիտական գրականությունում *a(i)še(i)*-ն կապվում է *aše* «երբ» բառի հետ, որից և բխեցվում է «երբևիցե» իմաստը: Բայց դա կարող է պատահական բնույթ կրել, քանզի առաջինը՝ *a(i)še(i)*-ն, միայն մեկ անգամ է վկայված *ašei* ձևով (մյուս բոլոր դեպքերում սկզբնական *a*-ից հետո առկա է *i*): Մինչդեռ *aše* «երբ» բառը առանց բացառության հանդես է գալիս միայն *aše* ձևով: Նմանապես և *a(i)nei*-ն միայն մեկ անգամ է վկայված *anei* ձևով: Այս երկու բառերը Վանի արձանագրություններում հիմնականում հանդես են գալիս նմանատիպ արտահայտություններում՝ երբեմն նաև համատեղ: Տե՛ս օրինակ. ... *ali(e) Oi(e) aišei ainei qaabqaaršOlalani* - «... որը երբեք ոչ ոք չի գրավել(ը)» (KYKH, 523, 4710), ... *qarbie šuli manu ui aišei LUGÁL-še zadalani* - «... ժայռը(ը) լքված(ը) էր, երբեք արքաները չէին կառուցել» (KYKH, 427a4), ^{δD}*Puranadi tuišhi manu ui ainei LUGÁL ištini kauri* - «Պուրանադի (գետը) *tuišhi* էր, ոչ մի

շարժին և փոփոխի (= նա, որ շարժվում և փոփոխվում է) (Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 161-162):

⁹ Հոդերի նման ազատ կիրառությունը հատուկ է նաև հայերենին: Այս մասին տե՛ս ՈւՊ, էջ 24:

¹⁰ Փաստորեն, ուրարտերենում դերանունները կարող են հանդես գալ և՛ որպես կցույթ՝ հավելվելով տարբեր խոսքի մասերի վերջին, և՛ որպես ինքնուրույն բառ: Այս երևույթը հատուկ է նաև հայերենին՝ ի դեմս *ս, դ, ն* դերանվանական հոդերի, որոնք արտահայտում են ցուցական, ստացական և անձնական դերանունների իմաստ: Այս մասին տե՛ս ՈւՊ, էջ 25:

արքա այստեղ չէր հայտնվել(°)» (*KYKH, 174 B17, 2447*) և այլն: Ըստ ամենայնի, այս երկու բառերն ունեն նմանատիպ իմաստ՝ *aine(i)* «ինչ-որ մեկը, որևիցե մեկը (նրանցից)», *aiše(i)* «ինչ-որ մեկը, որևիցե մեկը (սրանցից)»:

Վանի արձանագրություններում հայերենի երկրորդ դեմքի դա ցուցական դերանվան հնարավոր առկայության մասին: Վանի արձանագրություններում երկու անգամ վկայված են *da-ni* «^o» և մեկ անգամ *idani* «^o» բառերը: Մասնագիտական գրականությունում այս երկու ձևերը տարանջատվում են և համարվում տարբեր բառեր: Այս (*i*)*da-ni*-ն թերևս կարելի է կապել՝ *ina-ni, iša-ni* դերանունների և *šana* բառի հետ¹¹. հմմտ. հայ. սա, դա, նա դերանունները: Համոզվածության համար բերենք այն բոլոր հատվածները, ուր վկայված են վերոհիշյալ բառերը.

1. ... *išani aptini* ^{KUR}*Marmani* ... *kuṣu-bi pari KUR-ni išani aptini* ^{URU}*Qumenuni* ... - « ... (թվարկվում են երկրների անուններ) այն կողմը Մարմանի երկրի հասա միչև երկիրը՝ (որը գտնվում է) այն կողմը Քումենունի քաղաքի ... » (*KYKH, 44верх.9-13*):

2. 4 *LUGAL*^{MES} *inani aptini šuiniani* 19 *LUGAL*^{MES} *išani aptini šuiniani* ^{ŠADU}*babania kurunie* - « ... (թվարկվում են 4 երկրների անունները) 4 թագավորները ծովի այս կողմը ... (թվարկվում են 19 երկրների անունները) 19 թագավորներ ծովի այն կողմը՝ լեռան կողքին» (*KYKH, 3895-13*):

3. *kuṣubi pari* ^{URU}*Ištikuniu KUR šana aptini šunie* - «հասա միչև Իշտիկունիու երկիրը (որը գտնվում է)՝ այն կողմը ծովի» (*KYKH, 1805*):

4. *haitu* ... *da-ni aptini [...]-lei* ^{NA4}*qarbie* ^{KUR}*Ħatina-aštani*¹² *aptini* - «գրավեցի (թվարկվում է երկրների և քաղաքների անուններ) dani կողմը ... ժայռը (°) Խաթինաշտան երկրի կողմը» (*KYKH, 44лиц.6*):

5. ...] *azibi-i?* *šana aptini [...]* (կամ ...) *azibi*¹³ *išana aptini [...]* «^o» (*KYKH, 4833*):

6. *ali inukani edini azibie dani ħarari aṣu* - «^o» (*KYKH, 241E57*):

Ինչպես տեսնում ենք, նմանատիպ համատեքստում մի կողմից ունենք *i-šani/a, i-nani*, մյուս կողմից՝ *šana, dani* ձևերը¹⁴: *Šani* դերանունը վկայված է նաև

¹¹ Այս *šana*-ն, անշուշտ, պետք է կապել *išana/išani* դերանվան հետ: Գ. Մելիքիշվիլին *dani, išani, inani* և *aštani* բառերի համար ենթադրում է նմանատիպ իմաստ՝ այս, այդ մոտավոր նշանակությամբ (, *над. 28, прим. 14, 15*):

¹² Այդպես է ըստ Ն. Հարությունյանի: Մյուսները կարդում են առանձին՝ ^{KUR}*Ħatina aštani* ձևով (տե՛ս *KYKH, с. 67, прим. 27*).

¹³ Ն. Հարությունյանը կարդում է *azibii šana* ձևով, սակայն *azibi-* բառը այլուր վկայված է միայն *azibi(e)* տեսքով, բայց ոչ երբեք *azibi(e)-i* կամ *azibi-i*: Ըստ այդմ, պետք է կարդալ *azibi išana*, ինչպես որ անում է Գ. Մելիքիշվիլին (*УКН, над. 311, прим. 2*): Հմմտ. *išani* դերանվան հետ:

išani bidiadi «այնտեղից շրջվեցի»¹⁵ արտահայտությունում (տե՛ս *KYKH*, 241F₁₃, 409s; 410s): *i-da-ni*-ին մեկ անգամ վկայված է հետևյալ անհասկանալի արտահայտությունում՝

II-di NINDA^{MEŠ} : I-di LU^{MEŠ} I-di-ni UD^{ME}-ini idani : anagie - « » (*KYKH*, 394лиц.11):

Ի. Դյակոնովը այս *idani*-ն փորձում է ընկալել որպես բայ՝ «կատարել», «գործարկել» ենթադրյալ իմաստով¹⁶, ինչը, սակայն, մերժում է Ն. Հարությունյանը¹⁷: Ինչ վերաբերում է *ina-* հիմքին և նրանից կազմավորված ձևերին (*ina-ni*, *ina-ne-li* և *ina-na-ni*), ապա վերջիններս բազմիցս վկայված են այլ կոնտեքստներում՝ «այս, այդ» իմաստով. օրինակ՝ *inani LUGÁL-e nunabi ...* - «այս (ամենը) արքային հասավ ...», *inaneli arnuššinelī (I MU/šali) zadubi* - «այս արարքները (մեկ տարում) արեցի», *inani šue^m RusahinaOe hurišhi manini* - «սա՛ Ռուսայական ծովին ոռոգիչ(՝) թող լինի» կամ «այս ծովը Ռուսայական, ոռոգիչ(՝) թող լինի» և այլն:

Դերանվանական մակբայներ: Ուրարտերենում հնարավոր է առանձնացնել հետևյալ դերանվանական մակբայները՝ *ešti-* «այստեղ», *edi-* «այդտեղ»: Օրինակ՝ *LU^{EN}.NAM edia terubi* «կառավարիչ այնտեղ դրեցի» (*YKH*, 265), *X LU^{MEŠ} gunušini eiršidubi ištini* - «*X* մարտիկներ բնակեցրի այստեղ» (*YKH*, 127 II₃₄, 128 A2₂₁) և այլն: Մասնագիտական գրականության մեջ առաջինը համեմատվում է հայ. *աստ* «այստեղ», *աստի* «այստեղից»¹⁸, իսկ երկրորդը՝ *այդի/այտի* «այդտեղ», «այդտեղից» մակբայների հետ¹⁹: Ընդ որում, ինչպես ուրարտերենում²⁰, այնպես էլ հայերենում դերանվանական մակբայները

¹⁴ Այս մասին տե՛ս **Այվազյան Ս.**, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, I (այսուհետև՝ ՎԹՍԱ), Ե., 2003, էջ 38-39:

¹⁵ Հոդվածում ուրարտերեն տեքստերի տառադարձումը տրված է ըստ սկզբնաղբյուրի: Սակայն դրանք հաճախ շտկման կարիք ունեն: Օրինակ, վերոհիշյալ հատվածը պետք է ընթերցել՝ *i-ša-ni pe-ti-a-di (i=sa=ni pe-tia=di)* «այստեղից ետ դարձա (հայ. (h)ետ-եա-յ, անցյալ կատարյալ, առաջին դեմք, չեզոք սեռ)». *pef-* հայ. (h)ետ < h.-ե. **ped* (տե՛ս ՎԹՍԱ, էջ 21, 48-49):

¹⁶ Տե՛ս **Дьяконов И.**, *Древний Восток*, 5, Е., 1988, с. 152.

¹⁷ Տե՛ս *KYKH*, с. 447.

¹⁸ **Mordtmann A. D.**, *Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und Umgegend*, ZDMG, Bd. XXVI, 1872, էջ 528; **Sandaljian J.**, *Les inscriptions connifères urartiques*, Venise, 1900, p. 384:

¹⁹ Գ. Ղափանցյանը համեմատում է հայ. անդէն՝ «այնտեղ», «այն ժամանակ» բառի հետ (ՈւՊ, էջ 38):

²⁰ Հայերենի դերանվանական մակբայներն են՝ *աստ* «այստեղ, այս ժամանակ», *անդ* «այնտեղ, այն ժամանակ», *այդի* (այտի), *այսր* (սեռական հոլովը այս-ից) և այլն: Հայերենի դերանվանական մակբայների, նրանց նշանակությունների և հարակից հարցերի մասին մանրամասն տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 83-84, Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 140-141:

արտահայտում են և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստ: Ուրարտերենում ժամանակի իմաստով գործածվելիս հաճախ դրվում են ցուցական դերանունների հետ համատեղ²¹. օրինակ՝ *inukani edini* «սրանից հետո», *išukani edini* «դրանից հետո»: Դերանվանական մակբայների նման կիրառությունը խորթ չէ նաև գրաբարին. օրինակ՝ *ի ժամանակի անդ այնմիկ* «այդ նույն ժամանակ» (Բուգ. IV, ԻԵ):

Հայերենում դերանվանական սույն մակբայներն ունեն գործածության հետևյալ առանձնահատկությունը: Նրանք կարող են հանդես գալ տարբեր հոլովներում դրված գոյական անունների հետ համատեղ՝ փոխարինելով ցուցական դերանուններին կամ հոդերին: Նման կիրառության դեպքում վերջիններս արտահայտում են դադարի, շարժման ելակետի կամ նպատակակետի իմաստներ²²: Այսպես.

1. Ի(յ) նախդրով տրականի հետ²³ (արտահայտում է ներգոյականի իմաստ): Օրինակ՝ Արկէք գդա ի գուբ մի յանապատի աստ: Գրեցի ձեզ ի թղթի այդր:

2. Ի(յ) նախդրով հայցականի հետ (ուղևորման հայցական): Օրինակ՝ Գայր հասաներ ի տեղի անդր: Եւ ձկունք, որ ի գետ անդր էին՝ սատակեցան (արտահայտում է ներգոյականի իմաստ):

3. Բացառական հոլովի հետ: Օրինակ՝ Ե՛լ ի տապանէ այտի: Ի մերոց զօրաց աստի: Առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց:

Ճիշտ նույն պատկերն ունենք նաև ուրարտերենում, որտեղ դերանվանական մակբայները գոյականների հետ գործածվելիս համարվում են ետդիրներ և արտահայտում են հետևյալ իմաստները²⁴.

-**edia** «դեպի», «(ինչ-որ բնակավայրի) ուղղությամբ»: Օրինակ՝ *šta-di KUR Uburda-ue edia* «արշավեցի դեպի Ուբուրդա» (*YKH, 127 II⁴⁰*), *ušta-di ... KUR Arha-ue edia* «արշավեցի դեպի Արխա» (*YKH, 127 III³³⁻³⁴*) (այս *edia*-ն նմանատիպ արտահայտություններում հաճախ փոխարինվում է ուղևորական հոլովով. տե՛ս վերը):

-**edini** «-ից», «-ին, համար, վրա»: Գործածվում է բացառական հոլովի հետ. օրինակ՝ *LUGAL KUR Uelikuhi ... KUR-ni edini tamhubi* «Վելիկուխի երկրի թագավորին (իր) երկրից հեռացրի» (*YKH, 265²⁻³*): *turu-tineni ... qitura-ni edini* «Թող ոչնչացնեն գետնի երեսից» (*KYKH, 40 o.c. 11, 41 o.c. 10*) և այլն:

-**ešini-ic**²⁵ «-ին, համար»: Օրինակ՝ *ḫaldia eštinie* «Խալդի-ին/ Խալդի-ի համար» (*KYKH, 173 I⁶, 173 II² ...*), *KUR Etiunia eštinie* «դեպի Էթիունի երկիրը»

²¹ Տե՛ս *YJ, c. 59-60*:

²² Արքայապետ Ա., նշվ. աշխ. էջ 83:

²³ Հայերենում ցուցական դերանունների հոլովների հետ գործածությունը տե՛ս Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 140-141 (մեջբերումները գրաբարից վերցված են նույն տեղից):

²⁴ Տե՛ս *YJ, c. 59*.

(*YKH, 155 F5*), ²⁵*Haldie uštuni ulgušia-ni edini* «Խալդի աստծո ողջությանը ... նվիրեց (բառացի՝ *ուղարկեց, դուրս հանեց*)» (*KYKH, 390i, 396i...*) և այլն:

Ինչպես նշեցինք, հայերենում դերանվանական մակբայները հաճախ փոխարինում են գոյականի համապատասխան ցուցական հոդին: Ուրարտերենում *edi-* դերանվանական մակբայը փոխարինում է ուղևորական հոլովին, որն ունի նույն ցուցիչը (*-di*), ինչ որ հայերենի երկրորդ դեմքի ցուցական հոդը (դ): Օրինակները և բացատրությունները տե՛ս վերևում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ուրարտերենի դերանվանական մակբայները ոչ միայն իրենց ձևով և իմաստով, այլև գործառնությամբ գրեթե նույնությամբ առկա են գրաբարում: Այսինքն, թե՛ ուրարտերենում, թե՛ հայերենում համապատասխան դերանվանական մակբայները կարող են գործածվել ինչպես ինքնուրույն՝ տեղի կամ ժամանակի մակբայների իմաստով, այնպես էլ գոյականի հետ՝ արտահայտելով դադարի, շարժման (ուրարտերենում՝ առավել լայն իմաստով) ելակետի կամ նպատակակետի իմաստներ:

Ամփոփելով վերոհիշյալ փաստերը՝ գալիս ենք այն հաստատ եզրակացության, որ ուրարտերենում ցուցական դերանունների հիմքում ընկած են՝ *s* (գրվում է *š*) և *n* հիմքային հնչյունները, որոնք հանդես են գալիս՝ *so-*, *no-* (գրվում են՝ *šu-*, *nu-*)²⁶, *sa-*, *na-* թերևս նաև՝ *ais-*, *ain-* դերանվանական հիմքերի տեսքով: Հմտ. հայ. սա, դա, նա / սո-յն, դո-յն, նո-յն / *այս, այդ, այն* ցուցական դերանունները: Եթե ընդունենք, որ Վանի թագավորության շրջանում հայերենում դեռ գործում էր հնդեվրոպական նախալեզվի ցուցական դերանունների առարկաները ըստ դիրքի՝ մերձավոր և հեռավոր տարբերակելու համակարգը, ապա *s*-ով հիմքերը պետք է ցույց տան մերձավոր, իսկ *n*-ով հիմքերը՝ հեռավոր առարկաներ: Այս հիմքերի վրա *i* (հայ. ի/յ նախդիր²⁷) հնչյունի և *-ki/a-*, *-sī(-)* ածանցների հավելումով կազմվում են ուրարտերենի բոլոր ցուցական դերանունները (տե՛ս վերևում):

²⁵ Ն. Հարությունյանը այս *eštini-*ի մեջ տեսնում է առանձին բառ՝ «շնորհիվ (°)» պայմանական իմաստով (*KYKH, c. 273 прим. 11*): Նման հետևության համար նա հիմնվում է այն հանգամանքի վրա, որ վերջինս միշտ հանդես է գալիս *-i(i)e* վերջավորությամբ (տրական հոլով), ինչը համոզիչ չէ: Հաստատապես այն պետք է կապել *ešti-* «այստեղ» դերանվանական մակբայի հետ, ինչպես որ անում է Մելիքիշվիլին: Հմտ. նմանատիպ համատեքստում մեկ այլ *edi-* «այդտեղ» մակբայի նույն իմաստով գործածությունը: Ինչ վերաբերում է տրական հոլովի *-i(i)e* վերջավորությանը, ապա հայերենում նույնպես դերանվանական մակբայները կազմվում են ցուցական դերանունների տարբեր հոլովներից. օրինակ՝ այսր «այստեղ» սեռ. հոլով այս-ից և այլն:

²⁶ Սեպագիր *š*-ն համապատասխանում է հայ. *ս*-ին, իսկ *u-*ն՝ ու-ին, *n-*ին և *ı-*ին: Տե՛ս *YA, c. 22-23*, ՎԹՄԱ, էջ 15-16:

Բացառված չէ, որ, ի դեմս *idani/dani* բառերի, գործ ունենք հայ. երկրորդ դեմքի *դա* դերանվան հետ: Ըստ ամենայնի, հայերենի առաջին, երկրորդ և երրորդ դեմքի *ս, դ, ն* հոդերի համակարգը դեռ չէր ձևավորվել, և Վանի արձանագրություններում սրանցից յուրաքանչյուրը տարբեր կերպ և աստիճանի է արտացոլված: Երկրորդ դեմքի *դ* հոդը ունի հոլովակազմիչ դեր, որից և կազմվում է ուրարտերենի, այսպես կոչված, ուղևորական հոլովը²⁷: Իմաստային առումով այն շատ մոտ է կանգնած գրաբարյան *դ* հոդին և, ինչպես և գրաբարում, հերթագայվում է համապատասխան դերանվանական մակբայով: Երրորդ դեմքի *ն* հոդը հանդես է գալիս որպես որոշիչ հոդ՝ ազատորեն, ինչպես և գրաբարում՝ հավելվելով նախադասության տարբեր անդամներին: Վերջինս, ի տարբերություն գրաբարի, հանդես է գալիս նաև ինքնուրույն՝ *ini* ձևով, որպես մերձավոր առարկաներ ցույց տվող դերանուն (թերևս ունի որոշիչ իմաստ)²⁸: Այս կերպ կիրառվելիս այն կարող է դրվել գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո՝ նախադաս կամ հետադաս: Հայերենի առաջին դեմքի *ս* հոդը Վանի արձանագրություններում վկայված չէ, փոխարենը օգտագործվում են *-me* «ինձ» և *-uki* «իմ» (ստացական իմաստով) դերանվանական վերջնամասնիկները:

Ուրարտերենի *ešti-* և *edi-* մակբայական հիմքերում արտացոլված են հայերենի *աստ, այդի (այտի)* դերանվանական մակբայները, որոնք հայերենի հետ ունեն նույն իմաստը: Այս մակբայները գոյականների հետ դրվելիս փոխարինում են համապատասխան ցուցական դերանուններին և հոդերին՝ կազմելով հայերենի հետ նմանատիպ կառուցվածքներ:

Հայերենի և ուրարտերենի ցուցական դերանվանական հիմքերի համեմատական պատկերը ներկայացնում է հետևյալ աղյուսակը (դերանունները աղյուսակում տրված են զուգահեռաբար՝ ըստ շարքերի):

²⁷ Ուղևորական հոլովը կազմվում է հիմականում սեռ-տրական հոլովի վրա՝ *-di(e)* մասնիկի հավելումով: Հոգնակի թվում *-di(e)*-ի փոխարեն հավելվում է *-as-te*: Ըստ որոշ ուսումնասիրողների, այս *-as-* մասնիկը ներկայացնում է ուրարտերենի հոգնակի թվի *-a-* հոլովիչի առավել հնագույն տեսքը, որը այլ հոլովներում չի պահպանվել:

²⁸ Ամենին պատահական չէ, որ Վանի արձանագրություններում մերձավոր առարկաների *ini* ցուցական դերանունը գործածվում է միայն բացարձակ հոլովով դրված գոյականների հետ, բայց ոչ երբեք ուղղական հոլովով: Հիշենք, որ ուրարտերենում ուղղական հոլովը կազմվում է բացարձակից՝ *-ni* մասնիկի հավելումով:

Ուրարտերեն	Հայերեն
<i>i-so-</i> (<i>iso -k-</i>)	սո-յն
<i>i-no-</i> (<i>ino-k-, ino-s-</i>)	նո-յն
<i>i-sa-</i>	սա
<i>i-da-</i> ?	դա
<i>i-na-</i>	նա
<i>ais-e/ei</i>	այս
<i>ain-e/ei</i>	այն
Հոդեր	
<i>-di</i> (ուղևորական հոլովի ցուցիչ)	դ (հոդ)
<i>-ni</i> (ուղղական հոլով / որոշիչ հոդ)	ն / - (հոդ)
<i>Ini</i> (մերձ. առարկաների ցուցական դերանուն) ²⁹	-
Դերանվանական մակբայներ	
<i>esti-</i>	աստ, աստի
<i>edi-</i> (< <i>ed-ti-</i>)	այդի/այտի (< այդ-տի)

УКАЗАТЕЛЬНЫЕ МЕСТОИМЕНИЯ УРАРТСКОГО ЯЗЫКА В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ

АЙВАЗЯН С. Р.

Резюме

В урартских текстах засвидетельствованы следующие указательные местоимения:

iku-ka-ni/hini (от основы *iku-*);

iša-ni/hini (от основы *iša-*);

ina-ni/hini, inu-ka-ni/hini, inu-si, inu-ki (от основ *ina-*, *inu-*) и *ini*.

²⁹ Արտահայտում է որոշյալ իմաստ, հերթագայվում է նախորդի հետ:

Нетрудно заметить, что для полноты ряда не хватает местоименных форм с основой i-ka- и i-šu-. Но исходя из того, что знак ku в клинописной системе имеет также значение šu, вместо iku-ka-ni/hini можно прочесть išu-ka- ni/hini и тем самым заполнить ряд. Этот ряд можно дополнить также засвидетельствованными в схожих контекстах словами aišeī “когда-нибудь” и ainei “кто-нибудь”, предложив для первого перевод “кто-нибудь (из этих)”, а для второго – “кто-нибудь (из тех)”. В результате для местоименных основ урартского языка получим следующую картину:

iša-, išu-, aiš-;

ina-, inu-, ain- (ini).

Если учесть, что в урартском (в ту эпоху и в ассирийском) знак š произносился как “с”, а знак u (ввиду отсутствия соответствующего знака в клинописной системе) передавал также и звук “о”, то можно утверждать, что урартские основы указ. местоимений практически полностью повторяют соответствующую диаграмму древнеармянского языка для 1-ого и 3-его лица, где соответственно имеем:

sa-, so-, ays- (1-ое лицо);

pa-, po-, ayp- (3-е лицо).

Что же касается ini, который в урартском связан с показателем именительного падежа -ni (определенный артикль), то по всей вероятности его следует связать с армянским определенным артиклем - n. Но в урартском, в отличие от армянского, последний может стоять перед словом (отдельно), в качестве указ. местоимения.

Засвидетельствованные в урартских текстах наречия места edi-ni/a “оттуда”, “там”, išti-ni “здесь” можно сравнить с теми же наречиями арм. языка aydi/ayti “там”, asti, astn “здесь”. Причем в обоих языках они могут выступать отдельно как наречия места, так и вместе с существительным, образуя при этом тождественные грамматические конструкции.